ԹԵՄԱ 5

ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

ԴԱՍ 5.3. Աշխարհի երկրների դասակարգումն ու տիպաբանությունը

1. Սխալ է կարծել, թե կառավարման հանրապետական կարգը մշտապես ժողովրդավարական է և առավելություն ունի միապետականի նկատմամբ: Բավական է եվրոպական միապետությունները համեմատել Ասիայի, Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի մի շարք հանրապետությունների հետ, որ հրաժարվենք նման թեզի բացարձակացումից:

2. **Միասնական պետություններում** գոյություն ունի միասնական օրենսդիր և գործադիր իշխանություն, գործում է մեկ սահմանադրություն, իսկ երկրի ներքին տարածական բաժանումն ընդունված է անվանել վարչատարածքային բաժանում: Այդպիսի պետություններ են Ճապոնիան, Ֆրանսիան, Իտալիան, Արգենտինան, Հայաստանի Հանրապետությունը և այլն:

Դաշնային պետությունների տարածքը բաղկացած է սահմանափակ պետական անկախություն ունեցող քաղաքական տարածքային միավորներից, որոնք մեկ պետության սահմաններում կազմել են դաշնություն: Այդպիսի միավորներ են հանրապետությունները, նահանգները, պրովինցիաները, հողերը, կանտոնները և այլն: Դաշնային կառուցվածք ունեն ՌԴ-ն, Հնդկաստանը, ԱՄՆ-ը, Գերմանիան, Կանադան:

Աշխարհի ժամանակակից քաղաքական քարտեզում կա մեկ *համադաշնություն*՝ Շվեյցարիան, որում չկա միասնական պետական տարածք և միասնական քաղաքացիություն: Դրա անդամները պետական կառավարման և միջազգային իրավունքի սուբյեկտներ են: